ԵՄ աջակցությամբ

Իջևանում տեղի է ունենում «ՀՈՒՆՁԻՑ՝ ՎԱՐԴԱՎԱՌ» համայնքային փառատոնը

Մամուլի հաղորդագրություն

Եվրամիության կողմից ֆինանսավորվող EU4Culture ծրագրի շրջանակներում, 2023թ. հուլիսի 20-22-ը Իջևանի համայնքապետարանը **«Մենք ենք մեր սարերը»** ծրագրի հայեցակարգային մտահղացմամբ կանցկացնի «Հունձից՝ Վարդավառ» եռօրյա մշակութային փառատոն: Փառատոնը կանցկացվի Իջևան, Խաշթառակ, Աչաջուր և Բերքաբեր համայնքներում, որին մասնակից կլինեն համայնքի բոլոր բնակիչները:

Փառատոնի նպատակն է նախաձեռնությունների շնորհիվ զարգացնել Իջևան բազմաբնակավայր համայնքի մշակութային և տնտեսական գործուն կյանքն ու ապահովել համագործակցային և մշակութային տնտեսության զարգացումը: Երեք օր շարունակ համայնքի բնակիչներին և հյուրերին սպասվում է մշակութային ու ժամանցային համապարփակ ծրագիր:

Հուլիսի 20, Իջևան/Խաշթառակ. Օրվա մեկնարկը՝ տեղական արտադրանքի «Արհեստ և արվեստ» տոնավաճառ, լարախաղացի ցուցադրական ելույթ, գեղանկարչական և ձեռագործ իրերի ցուցահանդես, վարպետության դասեր, «Մեր Իջևան» մեծադիր կտավի ստեղծում, տավուշյան ավանդական խաղերի ցուցադրում, տոնական համերգ: Նույն օրը **Խաշթառակ համայնքում** կկազմակերպվի վերելք դեպի Խաշթառակի սար, հունձի մրցույթ՝ «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմի դրվագներով, թատերական ներկայացում «Դատի քարի մոտ», բացօթյա կինոդիտում և դիսկոտեկ:

Հուլիսի 21, **Աչաջուր.** Ուղեւորություն դեպի Մակարավանք վանական համալիր: Բերք ու բարիքի, ձեռագործ աշխատանքների ցուցահանդես վաճառք, երեկոյան ժամերգություն, տոնական համերգային ծրագիր, մեծ խարույկ:

Հուլիսի 22, Բերքաբեր. Բերքուբարիքի ցուցահանդես–տոնավաճառ, լարախաղացի ցուցադրական ելույթ, գեղանկարչական և ձեռագործ իրերի ցուցահանդես, վարպետության դասեր, ներկայացումներ, տոնական համերգային ծրագիր, կինոդիտում, դիսկոտեկ և իհարկե ավանդական ջրոցի:

Հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել .

Լիլիթ Ղալումյանին /Իջևանի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, սոցիալական աջակցության և առողջապահության բաժնի պետ/:
Հեռ. +37494464500
Էլ. հասցե- ijevancds@gmail.com

***

«Մենք ենք մեր սարերը» *ծրագրի հիմնական մոտեցումներն են՝ մշակութային ապակենտրոն զարգացումը և ուշադրության սևեռումը Իջևան համայնքի բնակավայրերին, ինչպես նաև՝ ստեղծարար և նախաձեռնողական մտածողության զարգացումը համայնքի բնակչության շրջանում:*

Ծրագրի նպատակն է՝ *մշակութային տնտեսության զարգացման և մշակութային ժառանգության պահպանման խթանման միջոցով Իջևանի ընդլայնված համայնքում ստեղծել գորեղ և համագործակցային մշակութային միջավայր: Ծրագիրը, «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի հետ համագործակցությամբ, իրականացնում է Իջևանի համայնքապետարանը: EU4Culture ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից՝ աջակցելու համար մշակութային և ստեղծարար հատվածին՝ հատկապես ուշադրություն դարձնելով Արևելյան գործընկերության երկրների մարզերի համայնքային քաղաքներին և բնակավայրերին: Ծրագիրն իրականացվում է Գյոթե ինստիտուտի (ղեկավար), Չեխական կենտրոնների, Դանիայի մշակութային ինստիտուտի և Վրաստանի ֆրանսիական ինստիտուտի կողմից:*